

Հայաստանի Հանրապետություն,
Լոռու մարզ, Սպիտակ համայնքի ղեկավար՝
Ք.Նիկողոսյանին
Նույն համայնքի, Հարթագյուղ գյուղի բնակիչ՝
Արկադի Անդրանիկի Հարությունյանից
Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, գյուղ Հարթագյուղ, 1-ին փող. 30 տուն
Էլ. փոստ՝ harutunyan_arkadi@mail.ru

Դ Ի Մ ՈՒ Մ

**(Հարթագյուղ գյուղում գտնվող թիվ 06-061-203-0001 կադաստրային ծածկագրով
համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նկատմամբ
նախապատվության իրավունքը ճանաչելու մասին)**

Հարգելի Համայնքապետ.

Թիվ 06-061-203-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող հողամասին կից ունեւ արտադրական նշանակություն ունեցող հողամաս, որի վրա առկա է կառույց համակցված կերերի արտադրելու համար:

Նշված հողամասին կից առկա հողամասը տիրապետում եմ շուրջ 15 տարի, որի վերաբերյալ կարող եմ հաստատել հարևանները և համագյուղացիները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝

1. Քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք, եթե հողամասերը համապատասխանում են սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Ձեռքբերման վաղեմության իրավունքն այդ անձանց նախապատվության իրավունքն է՝ իրավաբանորեն ձևակերպել այդ հողամասերի նկատմամբ իրենց օգտագործման իրավունքը՝ այդ հողամասերը նույն պայմաններով այլ անձանց տրամադրելու հնարավորության ծագման դեպքում:

Նման հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց պետք է փոխարենը տրամադրվեն այլ հողամասեր, կամ պետք է հատուցվեն նրանց վնասները՝ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերով:

2. Քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը կամ, եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային



նշանակության համար և, եթե հողամասերը համապատասխանում են սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Ձեռքբերման վաղեմության իրավունքը տրամադրվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով կամ դատական կարգով:

Հողամասը համապատասխանում են ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Ձեռքբերման վաղեմության իրավունքը պետության կամ համայնքի հողերից օգտվող անձանց նախապատվության իրավունքն է՝ իրավաբանորեն ձևակերպել այդ հողամասերի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը՝ հողամասերը նույն պայմաններով այլ անձանց տրամադրելու հնարավորության ծագման հայցվորի սեփականության իրավունքի ճանաչման համար:


Տվյալ դեպքում ավելի քան 10 տարի բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ տիրապետում և օգտագործում են **ՀՀ, Լոռու մարզ, Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի թիվ 06-061-203-0001 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականության իրավունքով պատկանող 0.89404 հա մակերեսով հողամասը**, որը դրանք ներառված չի Օրենքով սահմանված սահմանափակումների շարքում, ուստի առկա են բավարար հիմքեր իմ սեփականության իրավունքի ճանաչման համար:

Ելնելով վերոգրյալից

Խ ն դ ր ու մ ե մ

Կայացնել որոշում՝ Արկադի Անդրանիկի Հարությունյանիս նախապատվության իրավունքը՝ ՀՀ, Լոռու մարզ, Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի թիվ 06-061-203-0001 կադաստրային ծածկագրով համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.8 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

Դիմող՝



Ա.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA ID CARD



Ազգանուն/Surname

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
HARUTYUNYAN

Անուն/Name

ԱՐԿԱԴԻ
ARKADI

Հայրանունը/Patronymic name

ԱՆԴՐԱՆԻԿԻ

Սեռ/Sex

Ա/Մ

Ծնվել է/Date of birth

21.08.1983

Վավերական է մինչև/Date of expiry

12.10.2027

Քաղաքացիությունը/Citizenship

ՀՀ/ARM

Նույնականացման քարտի համարը/Identity card number

005656566

Քաղաքացու ստորագրությունը/Signature of holder



